ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » _____ 2024 թ. **N -Ա**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Վաղաժամկետ դադարեցնել Գևորգ Արմենակի Ստեփանյանի Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

«ԳԵՎՈՐԳ ՍՏԵՓԱՆՅԱՆԻ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի N 1 արձանագրության համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու անդամի մանդատը տրվել է ավագանու Մայր Հայաստան կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակի թեկնածու՝ Գևորգ Արմենակի Ստեփանյանին:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու անդամը պարտավոր է մասնակցել ավագանու նիստերին:

Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ ընդունված Երևան քաղաքի ավագանու կանոնակարգի 71-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ բաց քվեարկությունն անցկացվում է էլեկտրոնային համակարգով՝ տասը վայրկյանի ընթացքում, բացառությամբ Օրենքով կամ նույն կանոնակարգով նախատեսված դեպքերի:

Հարկ է նշել, որ նստաշրջանի ընթացքում, բոլոր քվեարկությունները անցկացվել են բաց, իսկ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կազմակերպական վարչության 31.01.2024 թվականի N Ն/5195-24 գրության համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու 5-րդ գումարման առաջին նստաշրջանի ընթացքում (2023 թվական) տեղի են ունեցել թվով 4 նիստեր, որոնց ընթացքում կազմակերպվել են թվով 42 քվեարկություններ: Նույն գրության համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու անդամ Գևորգ Ստեփանյանը մասնակցել է թվով 7 քվեարկությունների, այսինքն՝ նստաշրջանի ընթացքում բացակայել է քվեարկությունների կեսից ավելիից, իսկ բացակայությունները հարգելի համարվելու վերաբերյալ տվյալներ Երևանի քաղաքապետարան չեն ներկայացվել:

Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Երևան քաղաքի ավագանու անդամի լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել ավագանու անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ, եթե նա մեկ հերթական նստաշրջանի ընթացքում անհարգելի պատճառով բացակայել է ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը՝ առաջարկվում է վաղաժամկետ դադարեցնել Երևան քաղաքի ավագանու անդամ Գևորգ Արմենակի Ստեփանյանի լիազորությունները:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝